

## Անուշավան Պետրոսյան

### ԱԶԳԱԳՐԱԿԱԼ ՆՅՈՒԹԵՐԸ ՐԱՖՖՈՒ «ԿԱՅԾԵՐ» ՎԵՊՈՒՄ

**Յոնած, հիշատակարան, հեծանոց, թիմարել, կլեագործ, փուքս «գայլ ու ոչխար», քթի օղեր, մարմինը կամթել, թալիսմանական ծածկագրեր**

Մեծ է Րաֆֆու (Յակոբ Մելիք-Յակոբյան, 1835-1888 թթ.) թողած գրական ժառանգությունը, շուրջ 50 աշխատություն: Նա առաջին հայ գրողն էր, որ ուշադրություն հրավիրեց արևմտահայերի ու պարսկահայերի վրա: Իրավացի էր նա, երբ գրում էր, թե իրենից առաջ ոչ ոք ուշադրություն չի դարձրել արևմտահայերի և պարսկահայերի կենցաղին<sup>1</sup>: «Կայծեր»-ը գրելուց առաջ Րաֆֆին մի քանի անգամ եղել է Արևմտյան Յայաստանում, ուսումնասիրել այն ամենը, ինչը նկարագրել է վեպում: Ըստ Րաֆֆու «Կայծեր»-ը հանդես է գալիս որպես «... կատարյալ նկարագիր իր պատմական, էթնոլոգիական և աշխարհագրական ճշտություններով, որովհետև հեղինակը անձամբ ուսումնասիրել է բոլորը»<sup>2</sup>: Արևմտահայերին վերաբերող գրառումների հիմքում ընկած է Տարոն-Վասպուրական աշխարհի անփոխարինելի պատկերը, իսկ պարսկահայերի ազգագրական կատարյալ նմուշները Րաֆֆին նկարագրել է իր նամակներում<sup>3</sup>, ինչպես նաև «Կայծեր»-ում:

Ակնարկը, հիշատակարանը, օրագրությունը, ուղեգրությունը, նամակամի՞ն, պատմվածքը տարալուծվում են վեպի ամբողջության մեջ՝ հանդես գալով որպես ազգագրական նյութերի գրառման միջոց: Րաֆֆին վկայում է, որ Մշո դաշտում կա հայաբնակ 100 գյուղ, քրդաբնակ՝ 8-10: Յայաբնակ գյուղերում միջին հաշվով կա 70 ծուխ, յուրաքանչյուրում 10 շունչ: Ուրեմն, Մշո դաշտի 100 հայաբնակ գյուղերում հաշվվում է յոթ հազար ծուխ և 70 հազար բնակչություն: Եթե դրան ավելացնենք Մուշ քաղաքի 1000 ծուխը, ընդամենը կկազմի 80 հազար բնակիչ, որոնց մի մասը պանդխտության մեջ է<sup>4</sup>:

Խոսելով Վանի նահանգի մասին՝ Րաֆֆին բերում է հետևյալ վկայությունները. նահանգն ունի 24 գավառ՝ հայաբնակ և խառը բնակեցված, գյուղերից այժմ մնացել է 1652, որոնցում բնակվում են 43.750 հայ ընտանիք, 350 հազար բնակչությամբ, իսկ Վան քաղաքն ունի 20.640 հայ բնակիչ: Ուրեմն, Վանի նահանգում բնակվում են 370.640 հայեր: Նահանգում կա 382 եկեղեցի՝ 270 սպասավորներով, իսկ վանքերի ու մենաստանների թիվը հասնում է 87-ի<sup>5</sup>:

<sup>1</sup> Մ. Նահապետյան, Րաֆֆու «Կայծեր» վեպը, տե՛ս Րաֆֆի, Կայծեր, Երկերի ժողովածու, 10 հատորով, հ. 5, Երևան, 1963, էջ 499:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 513:

<sup>3</sup> Ա. Պետրոսյան, Րաֆֆու պարսկական ուղևորությունները որպես պարսկահայերի ազգագրական ուսումնասիրության սկզբնաղբյուր, ՊԲՅ, 2007, թիվ 3:

<sup>4</sup> Րաֆֆի, Կայծեր, հ. 5, էջ 427:

<sup>5</sup> Րաֆֆի, Կայծեր, Երկերի ժողովածու, հ.4, Երևան, 1963, էջ 473:

Անառարկելի է գրականության տեղն ու դերը որպես ազգագրության սկզբնաղբյուրի, որին մանրամասնորեն անդրադարձել ենք մեր աշխատանքում<sup>1</sup>: Նշենք միայն, որ հայ ազգագրության մեջ այս հիմնահարցի ուսումնասիրությունն ընդամենը մեկ տասնամյակի պատմություն ունի: Սույն աշխատանքի նպատակն է Րաֆֆու «Կայծեր» վեպում եղած ազգագրական վկայությունները թեմայավորել, տիպաբանել ըստ ավանդական ազգագրության մեջ ընդունված ստորաբաժանումների և դիտարկել որպես պարսկահայերի ու արևմտահայերի ազգագրական հետազոտման սկզբնաղբյուր<sup>2</sup>:

**Տնտեսական կենցաղ:** Նկատի ունենալով «Կայծեր» վեպում եղած ազգագրական նյութերը՝ համառոտակի կանգ առնենք երկրագործության, ամասնապահության, արհեստների, օժանդակ տնտեսական զբաղմունքների և այլ ոլորտների վրա:

Չնայած երկրագործության չորս փուլերը Րաֆֆու գրառումներում ամբողջական չեն, սակայն որոշակի պատկերացում են տալիս զբաղմունքի վերաբերյալ: Գյուղացիները վարում են սարերի հարթ կողմերը, ցանում, իսկ ոռոգումը թողնում են բնությանը, – գրում է Րաֆֆին: Ուշագրավ են վար ու ցանքի ժամանակ երգվող հորովելները.

Ահա ծագեց կարմիր արև,  
Տաք և պայծառ է օրը,  
Դե՛, քաշեցեք սիրուն եզներ,  
Հառաջ տարեք արորը:

Վարը վարենք, ակոս փորենք,  
Խոր ակոսներ հողի մեջ,  
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,  
Ցորյան դիզենք կալի մեջ:

Կգա ձմեռ մենք վախ չունենք.-  
Ուրախ կանցնի մեր օրը,  
Ուտելու միշտ պաշար ունենք,  
Լի և կուշտ է մեր փորը:

Դե՛, քաշեցեք սիրուն եզներ,  
Շուտով վարենք արտերը,  
Թող չասեն մեր դրացիքը՝  
Ծույլ են Հասոյի եզները<sup>3</sup>:

<sup>1</sup> Ա.Պետրոսյան, Հայ գրականությունը և բանարվեստը ազգագրության սկզբնաղբյուր, Երևան, 2012:

<sup>2</sup> Ելնելով վեպում առկա ազգագրական նյութերի ծավալից և հողվածի սահմանափակ հնարավորությունից՝ կանդորադառնանք միայն տնտեսական, ընտանեկան կենցաղին և ժողովրդական հավատալիքներին:

<sup>3</sup> Րաֆֆի, Կայծեր, հ.4, էջ 334:

Արտը ցերեկվա ժամերին մանգաղով հնձելիս,-գրում է Րաֆֆին,- շոգի պատճառով բերքի մեծ կորուստ է լինում: Ուստի հնձում են վաղ առավոտյան, երբ հասկերը խոնավ են և հատիկները չեն թափվում<sup>1</sup>: **Յոթնամյա**՝ հնձվորների առաջնորդը, առաջ ընկած, երգելով բացում է հոնը, խումբը ձայնակցում է նրան: Երբ մոտեցանք,- գրում է Րաֆֆին,- հոնածը իր մանգաղի ծայրը ցցեց կապած խրձի մեջ և դրեց մեր առջև: Կրոնավորը քսակից հանեց մի արծաթե դրամ, ընծայեց նրան: Յոթնամյա կողմից խուրճը մեր առաջ դնելը «սրբազան նվեր էր, որ մատուցում էր նա իր մշակութային բերքից»<sup>2</sup>:

Գյուղացի երկրագործը բարձուն է կապած խրձերը սայլի վրա, կապում հաստ ճոպանով և կրում կալը կալսելու: Մենք անցանք հայկական մի գյուղի մոտով,-գրում է Րաֆֆին,-գետնափոր խրճիթները հազիվ էին բարձրանում: Տափակ կտուրի վրա կալ էին կալսում, որպես ծանրություն, երեխաներին խնամքով նստեցրել էին կամի վրա, մի զույգ եզներ քաշում էին կամը և պտտեցնում փռոցի վրա: Մայրը **հեծանոցը**<sup>3</sup> ձեռքին խառնում էր հարդը: Տղամարդիկ չէին երևում, նրանց մի մասը դաշտում էր, իսկ շատերը մեկնել էին պանդխտության<sup>4</sup>: Չնայած հակիրճ, սակայն մի փոքր շարադրանքում նա տվել է երկրագործական աշխատանքների սեռատարիքային բաժանման հետևյալ նկարագիրը. կանայք հնձում են արտերը, աղջիկները մաքրում մոլախոտերից, երեխաները արորի լծի վրա նստած՝ քշում են եզները և օգնում գործին<sup>5</sup>:

Րաֆֆին հետաքրքիր գրառումներ ունի **անասնապահության** վերաբերյալ: Գարնան սկզբից բնակիչներն իրենց հոտերի հետ գնում են հեռավոր սարերի արոտները, այնտեղ մնում մինչև աշման վերջը: Այդ ընթացքում գյուղերը համարյա դատարկվում են տղամարդկանցից, գյուղում մնում են միայն գերդաստանի ծերունիները<sup>6</sup>: Այն գյուղացիները, որոնք քիչ անասուններ ունեին, սար չէին գնում, իրենց ոչխարները տալիս էին սար գնացողներին, որոնք ոչխարները պահում էին ողջ ամառը, իսկ աշմանը վերադարձնում տերերին: Սար գնացողները նրանցից վարձ չէին ընդունում՝ ասելով. «Էսօր ես եմ պետք գալիս, հարևան ենք, վաղը դու պետք կգաս»<sup>7</sup>:

Մանրամասնորեն նկարագրում է սարում ժամանակավոր կացարաններ հիմնելու կարգը: Յոթնամյա վրանները տեղադրված են նեղ հովտի մեջ՝ մի քանի հարյուր հատ: Ամեն ընտանիք ունի իր վրանը, սարվորները մի քանի գյուղերից են լինում,

<sup>1</sup> Նույն տեղում, հ.5, էջ 160:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 412-413: Այս սովորույթը կրել է համահայկական բնույթ և կենսունակ էր մինչև 1950-ական թթ.: Ուն առջև դնում էին խուրճը, նա պարտավոր էր որոշ գունար տալ բերողին: Այս երևույթը կրում էր առաջին բերքի, խրձի և ընդհանրապես առաջինի գաղափարը (տես Ա. Պետրոսյան, Րաֆֆու պարսկական ուղևորությունները, էջ 101):

<sup>3</sup> Հեծանոց - «Ատամնավոր թիածև գործիք, որով կալում ցորենն են հոտում» (տես Յ. Աճառյան, Յայերեն արմատական բառարան, հ.3, Երևան, 1977, էջ 76):

<sup>4</sup> Րաֆֆի, Կայծեր, հ.4, էջ 229: Րաֆֆին հիշատակում է ջառջառով կալսելու, ինչպես նաև ձեռքի ծանր փայտով հատիկները հասկերից անջատելու մասին:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 326:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 309:

<sup>7</sup> Նույն տեղում, հ.5, էջ 333:

նրանք խառնված չեն և առանձին խմբեր են կազմում: Ընտանիքի աշխատուժի մի մասը մնացել է գյուղում ցանքերը մշակելու համար<sup>1</sup>:

Սարում տղամարդիկ հոգում են հոտերի պահպանությունը, արոտավայրեր տանելուն, տնտեսության հիմնական հոգսերն ընկած են կանանց վրա: Սարում ոչ մի կին կամ տղամարդ անգործ չէր. կանայք էին կթում կաթը, կարագ պատրաստում, պանիր մակարդում, ոչխարներին խուզում, բուրդը մանում, ավելի ուշ կարպետ և գորգ պատրաստում<sup>2</sup>:

Խոսելով Ռշտունիքի գյուղերից մեկում պահվող ոչխարների մասին, Րաֆֆին գրում է. ես լսել էի, բայց այժմ աչքով տեսա, որ նրանց ոչխարներից շատերի դմակները այնքան մեծ էին, որ կապել էին փոքրիկ սայլակների վրա և այդ խեղճ անասունները դրանք քարշ էին տալիս ետևից<sup>3</sup>:

Րաֆֆին անդրադառնում է ձիերին **թիմարելուն**<sup>4</sup>. երբ գրաստների վրայից բեռներն իջեցրին, համետները վերցրին, քորոցներով քորեցին, թիմարեցին, քրտինքը ցամաքեցրին՝ հանգիստ տալով անասուններին:

Րաֆֆին չէր կարող չըջանցել տնտեսական կենցաղի կարևոր ոլորտներից մեկը՝ **արհեստագործությունը**: Նա տվել է մի շարք արհեստների հիմնական բնութագրությունը՝ չըջանցելով դրանց տեխնոլոգիական տեսանկյունները: Թողել է ընտանիքում արհեստների հակիրճ, սակայն ուշագրավ գրառումներ. լսվեց ճախարակի ձայնը, կեսուրը մանում էր, հարսը կարում, իսկ օրիորդը գործում իր հարսանիքի օժիտը<sup>5</sup>: Նկարագրել է **դարբնության և զինագործության** ուշագրավ մանրամասներ: «Պարսկաստանում և Տաճկաստանում բոլոր զինագործները հայեր էին. նրանք զենք էին պատրաստում իրենց թշնամիների համար, որոնք... գործածելու մեջ հմուտ էին»: Կարծես տեսնում եմ ծերունի արհեստավորին, զոգնոցով նստած զնդանի առջև, երկաթի կտորը ունելիով բռնած, խառտում է, հղկում կամ փոքրիկ մուրճով ծեծում: Փուքսերը գոռում են, շիկացած երկաթը դուրս են բերում քուրայի միջից, դնում զնդանի վրա և մեծ-մեծ կռաներով կռում, կայծերի մի ամբողջ հեղեղ թողնելով<sup>6</sup>:

Անդրադառնալով այլ արհեստների, Րաֆֆին գրել է. «**կլայելկագործը**, սովորաբար, Մեծ Ջատիկը մոտենալու ժամանակ, թափառում էր գյուղից-գյուղ, ժանգոտած պղնձեղեները մաքրելու և կլայելով պատելու համար: Գյուղացիներն իրենց բոլոր ամանները թափում էին նրա առջև, որովհետև գիտեին մի ամբողջ տարի նրա երեսը չեն տեսնելու»<sup>7</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 493-494:

<sup>2</sup> Նույն տեղում, հ.4, էջ 494:

<sup>3</sup> Րաֆֆի, Կայծեր, հ.5, էջ 325:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 266: Թիմարելու մանրամասները տես Ա. Պետրոսյան, Ղազարոս Աղայանը կենցաղագիր ու բանահավաք, ԵՊՀ Աստվածաբանական ֆակուլտետի «Տարեգիրք», 2009, թիվ Դ, էջ 274:

<sup>5</sup> Րաֆֆի, Կայծեր, հ.5, էջ 352-353: «Տասն նստած այծի մորթու վրա, ողջ գիշեր, ոսկրացած ձեռքով պտտում էր ճախարակի թևը, բամբակից թել էր պատրաստում»: «...ինձ թվում է, թե դեռ լսում եմ նրա մահապետական մեքենայի խուլ ճռճոցը»-, գրում է Րաֆֆին (տես Րաֆֆի, Կայծեր, հ.4, էջ 216):

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 235:

<sup>7</sup> Րաֆֆի, Կայծեր, հ.5, էջ 33:

Բաֆֆու վկայությամբ **աղը** ստանում են Վանի Ավանց գյուղում, ծովի ջրից, այն **բորակ** է կոչվում, գործածում են լվացքի մեջ, ունի մաքրելու զարմանալի հատկություն: Այդ աղը ժամանակին կարող էր դառնալ վանեցիների գլխավոր հարստություններից մեկը: Ծովային աղերի պատրաստման եղանակը շատ պարզ էր. ավերի մոտ փորված էին փոքրիկ առուներ, ջուրը ծովից բաց էին թողնում առուների մեջ՝ լիքը լցնելով, մնում էր այնքան ժամանակ, մինչև արևի ջերմությունից ջուրը լրիվ գոլորշիանում էր, հատակում մնում էին աղի փայլուն բյուրեղներ: Այդ աղն օգտագործում էին միայն օճառ պատրաստելիս<sup>1</sup>:

Բաֆֆին չի շրջանցել նաև նավակներ պատրաստելու մանրամասները. հին նավակներին տեղացիները **լաստ** կամ **սանդալ** են ասում: Հավասար երկարությամբ ու հավասար հաստությամբ մի քանի գերաններ իրար են կպցնում՝ տալով քառակուսու ձև: Քառակուսու մակերեսին ստեղծում են տախտակամած, իսկ կողքերը խփում վանդակաշար (ճաղեր): Քառակուսու տակից, չորս անկյուններում, կապում էին եզան կամ գոմեշի կաշվից պատրաստված չորս տիկեր, օդով լիքը լցրած: Դրանք հիշեցնում են Հերոդոտոսի նկարագրած նավակները, որոնք բոլորակ ձև ունեին և ամբողջովին գործած էին ուռենու ճյուղերից՝ պատած մորթիներով: Տիգրիսի և Եփրատի վրա այսօր էլ հայերը նման նավակներ են օգտագործում, միայն մորթիների փոխարեն իրենց զամբյուղածև նավակները պատում են կաշվով<sup>2</sup>:

Եզակի ազգագրական պատկեր է Վանի Այգեստան թաղամասի հայ բնակչության առօրյա կենցաղի նկարագրությունը. ամառային տոթին մարդիկ համարյա ապրում և գործում են փողոցում: Հյուսնը իր տան դռանը արոր է շինում, նրա փոքրիկ երեխաները հավաքում են տաշեղները: Շատերը փողոցում նստած՝ նայում են, թե նա ինչպես է աշխատում: Հարթ գետնի վրա ածուխով ինչ-որ քառակուսիներ են գծել և երկու մարդ խիճերով «գայլ ու ոչխար» կոչված խաղն են խաղում<sup>3</sup>: Փողոցի մի անկյունում, ծառի տակ, թափառական **ոսկերիչը** սարքել է իր քուրան ու փուքսերը: Մի փոքր հեռու **մանրավաճառ չարչին** բացել է իր ապրանքները, կանայք հանձնում են ձեռագործները, ստանում այլ ապրանքներ: Նա չի մերժում, երբ երեխաները տանից հավ են գողանում, հանձնում և ստանում մաստակ: Առևտուրը կատարյալ նահապետական է, ապրանքը փոխարինվում է ապրանքի հետ: Փողոցում էին դրված **երեխաների օրորոցները, հիվանդների անկողիները**, որոնց խնամում էին դեռահաս աղջիկները, նույնիսկ **դպրոցը** փողոց էր հանված և աշակերտները նստած էին ծառի տակ<sup>4</sup>: Դպրոցից մի քայլ հեռու, իր տան դռան առաջ, այգետերը օդի էր թորում, որի կաթսաները վարձով էին վերցնում՝ քաշած օդու կեսը ստանալու պայմանով: Արհեստական լճակի ջրում երեխաները լողանում էին, տղա և աղջիկ միասին, դրանք պարզ, միամիտ, նահապետական ժողովրդի զավակներն էին և միմյանցից չէին ամաչում<sup>5</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 88:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 99:

<sup>3</sup> «Գայլ ու ոչխար» խաղի կանոնների մանրամասները տվել է Վ.Բդոյանը (տես Վ.Բդոյան, Հայ ժողովրդական խաղեր, հ.3, Երևան, 1983, էջ 222-223):

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 213:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 215:

Բաֆֆին հակիրճ վկայություն ունի Վանի շալագործության և շալերը զանազան գույներով ներկելու եղանակների վերաբերյալ: Կանայք գործում էին նուրբ ու գեղեցիկ շալեր, որով հպարտանում էր Վանը<sup>1</sup>: Մինչև գործարանային ներկերի մուտքը Հայաստան, ավանդական ներկարարությունը հենված էր բուսական, կենդանական և հանքային միջոցներով տարբեր ներկեր ստանալու դարավոր փորձի վրա:

Խոսելով Բաղեշի առևտրի մասին՝ Բաֆֆին գրում է. առևտուրն իր բուռն զարգացման փուլում էր, քաղաքը կապի մեջ էր Վանի, Բուլանըխի, Տարոնի, Սղերդի, Ամիդի, մինչև անգամ Մուսուլի և Բաղդադի հետ: Բամբակը ներմուծում էին Պարսկաստանից, պատրաստում տարբեր տեսակի կտորեղեն՝ արտահանելով շրջակա շուկաները, իսկ եվրոպական ապրանքները ներմուծում էին Կ.Պոլսից<sup>2</sup>:

Յուրացնող տնտեսաձևերից Բաֆֆին կանգ է առել **որսորդության** վրա: Գայլ կամ արջ որսալու համար Ավոն պատրաստել էր ծուղակ: «Դա բոլորակ վիրապ էր բավական ճարտարությամբ գետնի մեջ փորված, և քսան արշինի չափ խորություն, հինգ արշինի չափ լայնություն ուներ»: Վիրապի մեջտեղում ամեն գիշեր դրվում էր մի լեշ, իսկ չորս կողմերը ծածկվում էղեգով, այնքան նուրբ, որ եթե հավը կանգներ այդ ծածկոցին, ցած կնկներ: Դեռ լեշի հոտը չառած գազաններն ընկնում էին վիրապի մեջ<sup>3</sup>: Ուշագրավ է փոսի մեջ ընկած գազանին դուրս հանելու նկարագիրը. որսորդը մի ձեռքում ուներ մահակ, մյուս ձեռքում՝ **քալափչեն**, շղթաներով ամրացված իջնում էր փոսի մեջ: Գազանի գլուխը մտցնում էր քալափչի մեջ, որ որևէ մեկին չվնասեր<sup>4</sup>:

**Ընտանեկան կենցաղ:** Բաֆֆին «Կայծեր»-ում գերդաստանի վերաբերյալ թողել է ուշագրավ վկայություններ: Նրա ապրած ժամանակաշրջանում դարերից եկող գերդաստանական վերապրուկները դեռևս պահպանվել էին՝ ուրվագծելով ընտանիքի ընդհանուր պատկերը՝ ներընտանեկան արխայիկ մնացուկներով: Ռեսի (գյուղապետի) ընտանիքը բավական մեծ էր, – ինչպես իր բնակարանը, միասին էին ապրում մի քանի սերունդ. մեծ պապը, նրա որդիները, թոռները, թոռնայքը: Տան սրահում քսանից ավել օրորոց էր ճոճվում, օջախը հարսներով, աղջիկներով, պատանիներով լի էր: Տանուտերն իր տասնմեկ եղբայրների մեջ միջնակն էր, այդ թվի կեսի չափ քույրեր ուներ, նրա մայրը դեռ կենդանի էր, իսկ հայրը վախճանվել էր 105 տարեկանում: Բոլոր եղբայրներն ապրում էին անբաժան, մի հարկի տակ, միասին, կրտսերը խոնարհվում էր ավագին: Բոլորի վրա իշխում էր մեծ պապը, գերդաստանի հայրապետը: Աղախիններով, սպասավորներով ընտանիքում 100 անդամ կլիներ<sup>5</sup>:

Երբ տեր հայրը, որի ընտանիքում հյուրընկալվել էր Բաֆֆին, երեք անգամ հագաց, նշանակում էր, որ նա արթնացել էր: Հարսը տեղից վեր կացավ և օգնեց նրան հագնվելու՝ ցույց տալով ամեն տեսակի օգնություն: Շուտով ողջ ընտանիքը ոտքի վրա էր<sup>6</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, հ.5, էջ 494:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 397:

<sup>3</sup> Բաֆֆի, Կայծեր, հ.4, էջ 241-242:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 242:

<sup>5</sup> Նույն տեղում, հ.5, էջ 332-333:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 354:

Այս հակիրճ նկարագիրը գերդաստանական կենցաղի արժեքավոր վկայություն է, գեղարվեստական արձակի միջոցով հեղինակի տեսածի ու ընկալածի արտահայտություն: Խոսելով գերդաստանում իր Շուշան տատի իրավունքների մասին Րաֆֆին գրել է. «Մինչև մահ նա չթողեց ձեռքից իր կառավարության գավազանը՝ ահագին փայտյա շերեփը, որով նա ընթրիքի և ճաշի ժամանակ կերակուր էր բաժանում: Մինչև նրա մահը, մեր տան մեծը և թե փոքրը ամենայն խոնարհությամբ հպատակվում էին նրա հեղինակությանը»<sup>1</sup>: Գերդաստանում մեծ մոր տեղի ու դերի, հեղինակության խստացված և իրական պատառիկ է վերոհիշյալ հաղորդումը:

Րաֆֆին անդրադարձել է նաև հարսի և չամուսնացած աղջկա վիճակին մեծ ընտանիքում: Աղջիկը վայելում էր բավական ազատություն, ում հետ ուզում, խոսում էր, կարող էր ոտքը «շատ հեռու դուրս դնել հոր տան շենքից», դաշտ գնալ, ման գալ՝ պահպանելով նորմերը: Երեսը քողով ծածկված չէր, խոսելու մեջ ազատ էր, իսկ երբ ամուսնանում էր, բոլոր կապերը կտրում էր դրսի հետ, դառնում տղամարդու սեփականությունը: Չորսը պատերն էին նրա աշխարհը, բերանը փակում էր, երեսը ծածկում թանձր քողով, ոչ ոքի ցույց տալու իրավունք չունեի<sup>2</sup>:

Խոսելով ամուսնության ավանդական կարգի վերաբերյալ՝ Րաֆֆին բերում է իր մոր օրինակը: Մորս համար փեսացու ընտրեցին «...առանց հարցնելու իմ մոր կամքը և առանց ստանալու նրա հաճությունը: Հարսանիքի հանդեսի օրը նա փախավ իր սիրած տղամարդու հետ, տարիներ անց վերադարձավ երեք երեխաներով, սակայն նրան չներեցին հարազատները, մինչև իսկ հայրը»<sup>3</sup>:

Հյուրասիրությունը եղել է մեծ ընտանիքի կարևոր գործառնություններից, որը չի շրջանցել Րաֆֆին: Հյուրընկալվելով տանուտերի ընտանիքում՝ թողել է հետևյալ նկարագիրը. նրա հարսները, աղջիկ թոռները, ոչ մեկը չէր թաքնվում ինձանից, ոչ մեկը երեսը չէր ծածկում, ինչպես ընդունված է Պարսկաստանի հայ կանանց մեջ: Նրանք բոլորը խոսում էին ինձ հետ, ինչպես վաղեմի բարեկամի<sup>4</sup>:

Երբ հայտնվեցինք Ռշտունիքի գյուղերից մեկում,– գրում է Րաֆֆին,– մի խումբ կանայք մոտ վազեցին, մեկը սկսեց ջրջնել կտուրը, մյուսը ավելել, երրորդը լուռ մոտենալով Ասլանին, ձեռքով հասկացրեց, որ թույլ տա կոշիկները հանել: Նա մերժեց՝ ասելով, որ իր կոշիկները դժվարությամբ են հանվում: Պատասխանը կարծես վիրավորեց կնոջը, բռնելով երկարավիզ կոշիկից, առանց թույլատվության, այնպես քաշեց հանեց, քիչ էր մնում ոտքն էլ հետը տանի<sup>5</sup>:

Ուշադրության արժանի են կին-տղամարդ փոխհարաբերության և Շամիրան թագուհու անվան հետ կապված Րաֆֆու հաղորդումները: Երբ տղայի հայրն ու մայրը

---

<sup>1</sup> Րաֆֆի, Կայծեր, հ.4, էջ 216: Երբ հայրս անցնում էր Երզրունով,–գրում է Րաֆֆին,–մի թուրք հարձակվում է նրա վրա և կտրում գլուխը: Նա գոռում է «ես տարա»: Պարզվում է, որ ընկերոջ հետ գրագ են եկել, թե ում դաշյունն է սուր: Բազմությունը գովաբանում էր սրիկայի քաջությունը, իսկ հայերը միայն գիշերով էին մոտեցել դիակին և թաղել (տես նույն տեղում, էջ 232-233):

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 412:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 231-232:

<sup>4</sup> Տես նույն տեղում, էջ 490:

<sup>5</sup> Տես Րաֆֆի, Կայծեր, հ.5, էջ 321:

ներկա էին, – գրում է Ռաֆֆին, – հարսը ամուսնուն ոչ մի ծառայություն ցույց չէր տալիս, կարծես նրան չի ճանաչում<sup>1</sup>:

Գյուղացի կինը չէր ցանկանում ապրել իր ամուսնու հետ և շատ անգամ փախչում էր հայրական տուն, սակայն ամուսինը ծեծելով հետ էր բերում նրան: Ամուսինը դիմում է առաջնորդարան և գանգատվում կնոջից: Առաջնորդարանը կանչում է կնոջն ու տղամարդուն և որոշում կայացնում. կնոջը դնում են ամուսնու շալակը, կապում, հետո ծառաներին հրամայում են դալար ճիպոտներով 50 հարված տալ կնոջը, իսկ ամուսնուն պարտադրում են նրան շալակած տանել տուն: Մինչև տուն հասնելը կինը գտնվում էր ուշաթափ վիճակում<sup>2</sup>:

Չեչտանքի թագուհի Շամիրամից երիտասարդներին ապահովելու նպատակով ծերունի նահապետներից մեկը որոշում է թագուհուն զրկել դյուքելու հնարքներից: Երբ թագուհին լողանում էր Արտամեդի բուրաստանի իր «մարմարոնյա ավազանում», հագուստն ու ուլունքները դրված էին խոտերի վրա: Ծերունին գիտեր, որ թագուհու հնարքները ուլունքների մեջ է, խլում է մանյակը և փախչում ծով: Չերարծակ թագուհին մագերիս պարսատիկի ձև տալով մի քարաբեկոր է գցում նրա ետևից, սակայն ժայռը նրան չի դիպչում և ընկնում է Արտամեդի մոտ: Ծերունին կախարդական ուլունքները գցում է ծովը և երկիրն ազատում հեչտանքի թագուհուց: Արտամեդի երգիչները երգ են հորինում, որից Մ.Խորենացին հիշատակում է երեք բառ. «ուլունք Շամիրամա ի ծով»<sup>3</sup>:

Մեծ ընտանիքները ներկայացնելիս Ռաֆֆին չէր կարող շրջանցել հայերի ավանդական բնակարանի գետնափոր և գլխատուն տիպերը, ինչպես նաև օժանդակ կառույցները՝ մառանը, թոնրատունն ու հացատունը:

Գյուղապետի տան կտուրը, որի վրա նստած էինք, – գրում է Ռաֆֆին, – մի քիչ էր բարձր գետնի մակերեսից, տունը գետնափոր էր, մտել էր լեռան կողի մեջ: Բոլոր տները այդպես էին շինված, մեկի կտուրը մյուսի բակն էր կազմում: Ներքևից նայելիս, տները կարծես իրար վրա շարված լինեին, ինչպես **սանդուխք**, որը բարձրանում էր մինչև սարի գագաթը: Կտուրներին մի-մի երդիկ էր բացված լույսի և ներսի ծուխը դուրս գնալու համար: Երբ կտուրից իջանք և տուն մտանք, մեր առջև բացվեց ստորերկրյա մի ընդարձակ բնակարան, զանազան բաժանմունքներով ու սենյակներով, որոնք բացվում էին իրար մեջ: Դա մի գետնափոր աշխարհ էր, որի մռայլ խորշերում կարող էին բնակվել բազմաթիվ ընտանիքներ<sup>4</sup>: Ռաֆֆին սովել է այդ բնակարանի ծածկի և ներսույթի ուշագրավ նկարագիրը: Քարե պատվանդանի վրա դրված սյուների գլուխներն ունեին փայտե խոյակներ, ողջ ծածկը նստած էր այդ սյուների վրա: Խոյակները փորագրված էին տարբեր քանդակներով: Սյուների վրա ամրացված տախտակների վրա, որոնք ունեին ձեռքի տեսք, դրված էին կավե ճրագներ, որոնք

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 354:

<sup>2</sup> Ծեծը անհնազանդ կնոջ պատիժն էր, իսկ նրան շալակած տուն տանելը ապաշնորհ ամուսնու պատիժը (տես նույն տեղում, էջ 218):

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 264:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 329:



աղավնու նմանություն ունեին, թռչունի կտուցից դուրս եկող պատրույզները վառվում էին կտավատի ձեթով: Սյուներից կախված էին նաև զեմքեր և մրգերով լի զամբյուղներ: Սյուներին կապված էին անթառամ ծաղիկներ: Սրահից դռները տանում են մառան, ամբար, խոշոր եղջերավոր անասունների մսուրք և ձիերի ախոռ: «Ամասունները և դրանց տերերը խիստ դրացիության մեջ էին»<sup>1</sup>: Բնակարանի պատերը առաստաղի մրից սևացել էին **տնային անհանգչելի օջախի** պատճառով: Դա այն սրբությունն էր, որով երգվում էր գյուղացին: Օջախը գտնվում էր սենյակի մեջտեղում: Նահապետական գերդաստանը ձմռանը հավաքվում էր օջախի շուրջը: Օջախը փոխարինում էր երկնքի արեգակին, լույս և ջերմություն պարգևում, ներսում այն միշտ վառվում էր, երբեք չէն հանգցնում<sup>2</sup>:

Առավել ամբողջական է Բաֆֆու հետևյալ եզակի նկարագրությունը՝ նվիրված Սալմաստի հայերի ավանդական ժողովրդական բնակարանին: Սալմաստում բնակվում են հայեր, թուրքեր, ասորիներ և հրեաներ, յուրաքանչյուրն ունի իր առանձին թաղամասը, հայերն ունեն երկու եկեղեցի, ասորիները՝ մեկ: Հայերի տները ամբողջապես կապված են իրար հետ, տանիքների վրայով կարելի էր հայոց թաղի մի ծայրից անցնել մյուսը: Բոլոր տներն ունեն գաղտնի հաղորդակցություն՝ զանազան անցքերի միջոցով, որոնք բացվում էին մի տնից մյուսը: Շատերն այնքան նեղ էին, որ ձեռքը հագիլ էր մտնում, ծառայում էին լուրեր հաղորդելու համար: Առանց տանից դուրս գալու որևէ արտակարգ դեպքի լուրը կայծակի արագությամբ այդ անցքերով տարածվում էր ողջ թաղում: Անցքերը երբեմն այնքան մեծ էին, որ վտանգի դեպքում կարելի էր գույք փոխանցել և մարդ անցնել: Տան մեջ կային ստորերկրյա մառաններ, թաքստոց, որ միայն տանտիրոջն էր հայտնի<sup>3</sup>:

Նկարագրելով ծաղկազարդ Այգեստանի գեղեցկությունը՝ Բաֆֆին գրում է. պառավը ինձ ցույց տվեց մառանը՝ գետնափոր ներքնատունը, որը պահպանում էր միապաղաղ ջերմություն: Հատակի մեջ կիսով չափ շարված էին գինու կարասներ, իսկ մառանի մյուս կողմում՝ յուղի, պանրի, մեղրի, աղ դրած տառելիս, զանազան բույսերից դրված թթուներ (հատկապես բոխի): Ցորենն ու ալյուրը լցնում էին մեծ փեթակների մեջ, իսկ աշնան ընդդեմները՝ բրինձ, ձավար, կորկոտ, բակլա, սիսեռ, ոսպ՝ ջվալների մեջ<sup>4</sup>: Հետո անցանք **թոնրատուն**, որտեղ մեծ թվով կանայք հաց էին թխում, բոլորին հսկում էր վարպետի կինը: Ջարմանում էի, թե պառավ սկեսուրը ինչպես էր իր իրավունքները տվել նրան: Մեր կողմերում քանի դեռ սկեսուրը կենդանի էր, հարսը ձայն չուեր տնտեսության մեջ: Թոնրատունը երեք կողմից ծածկված էր, իսկ դեպի բակի կողմը եղած երեսը՝ բաց: Այստեղից մտանք **հացատուն**, որտեղ մեկը մյուսի վրա շարած էին կարպետներ, գորգեր, սփռոցներ, նախշուն թաշկինակներ, պղնձյա

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 330:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 331:

<sup>3</sup> Բաֆֆի, Կայծեր, հ.4, էջ 225-226: Իր քեռու Սալմաստի բնակարանը Բաֆֆին անվանում է կիսամահապետական, ապակու փոխարեն լուսամուտները պատված էին թղթով (նույն տեղում, էջ 227, 231):

<sup>4</sup> Բաֆֆի, Կայծեր, հ.5, էջ 25:

մեծ ու փոքր շլացնող կաթսաներ, **կլայեկված** թասեր, սինիներ: Այստեղ էին և անկողիններն իրենց պարագաներով<sup>1</sup>:

Օժանդակ կառույցների մանրակրկիտ նկարագրությունը եզակի է այդ շրջանի ոչ միայն գեղարվեստական, այլև մասնագիտական գրականության մեջ:

**Ճաշելու կարգի մասին** Րաֆֆին ունի փոքրիկ նկարագրություն: «Ճաշելիս կանանցից ոչ ոք սեղանակից չէր, ոչ միայն օտարների, այլև տան տղամարդկանց հետ կինը միասին չի ճաշում: Նախ ուտում են տղամարդիկ, ապա՝ կանայք»<sup>2</sup>:

Հակիրճ կերպով նկարագրում է հայերի ուխտագնացությունը, որը բավական ծախսատար էր: Մի քանի գյուղերից, հարյուր-երկուհարյուր մարդ կազմում են քարավան, վարձում քուրդ զինյալների, որ իրենց պաշտպանեն ավազակներից: Սակայն նման պարագայում էլ քարավանն անվտանգ տեղ չէր հասնում<sup>3</sup>:

Սահմանային վայրերում **գորանոցներ** չունենալը հայկական գյուղերի համար կատարյալ պատուհաս էր: Ջինվորներին բաժանում էին հայերի տների վրա, ինքնակոչ հյուրը դառնում էր տան տերը, հարսն ու աղջիկը, կինը ծառայում էին նրան որպես աղախիններ: Ջինվորները հայերի տանը սնվում էին անվճար: Բողոքները հասան իրենց նպատակին, որոշվեց այդ վայրերի բնակիչների հաշվին կառուցել գորանոցներ: Հայերը գնացին այդ զոհողությանը, միայն ազատվեին անկոչ հյուրերից<sup>4</sup>:

«Կայծեր»-ում Րաֆֆին նկարագրում է հայկական **տարազը** և դրա անբաժանելի բաղադրիչը կազմող **գարդերը**, որոնք չնայած սուղ են, սակայն ունեն որոշակի արժեք: Նա գրում է, որ թեև մոտեցող կինը գլխով բարևեց, սակայն չխոսեց ինձ հետ, հասակիս նայելով՝ չծածկեց երեսը: Նուրբ գործվածքներից պատրաստված զգեստների վրա նա հագել էր լայն, երկար, կարմիր շապիկ, որն իջնում էր մինչև ոտքերը: Դա հագնում են աշխատանքի ժամանակ, որ մյուս զգեստները չկեղտոտվեն<sup>5</sup>: Հայ վաճառականի տարազը հետևյալ կերպ է նկարագրում. նա հագել էր թանգակին մուշտակ՝ աղվեսի ոսկեգույն մորթուց, և մեջքին փաթաթել թանձր գոտի՝ պարսկական շալից: Գլխին դրել էր ֆես, որի վրա փաթաթել էր **յազմա** (մետաքսե) կոշված թաշկինակ<sup>6</sup>:

Րաֆֆին թողել է Ռշտունիքի **տղամարդու տարազի** հետևյալ նկարագիրը. նա գլխին դրել էր թաղիքե կոնաձև **քոլոզ** (սրածայր գլխարկ)՝ փաթաթված գույնզգույն թաշկինակներով, որոնց ծայրերը երկար մագերի հետ թափվում են թիկունքին, հագին մի կարճ **քազախա** (կուրտիկ), որի ամրությունը կարող էր դիմանալ ամենասուր դաշույնին, ներքին մագեղեն հագուստ զոլավոր շալվարի մեջ հավաքած, երկար միզակը ձեռքին, թեթև վագրի նման անցնում էր մի ապառաժից մյուսը: Նրա միզակը երկու ծայրերում սուր երկաթներ ուներ, ծառայում էր և՛ զենք և՛ միզակ: Նրա թաղիքե **փափուկ տրեխների տակ** խփված են գամեր, որ չսահեն: Գոտիի մեջ խրած ունի մի

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 333: Պարսկահայերի և պարսիկների ճաշելու կարգի վերաբերյալ ուշագրավ մանրամասները տես Ա.Պետրոսյանի, Րաֆֆու պարսկական ուղևորությունները, էջ 110-111:

<sup>3</sup> Րաֆֆի, Կայծեր, հ.4, էջ 417:

<sup>4</sup> Րաֆֆի, Կայծեր, հ.5, էջ 232-233:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 234:

կեռ խենջար, որի կոթը դերձանով կապված է պատյանին: Այդ կապանքը նրա համար էր, որ մինչև արձակելը նրա բարկությունն անցնի, իսկ երբ մերկացրեց սուրը, մինչև արյուն չհանի, իր տեղը չի դնի<sup>1</sup>:

Սկարագրելով գյուղապետի գոտին՝ գրում է, որ գոտու մեջ խրել էր մի **խենջար**՝ փղոսկրյա կոթով, որի վրա քանդակված էին զանազան նկարներ. մի առյուծ, որը կռվում էր փղի հետ և մի կապիկ՝ ծառի վրա բարձրացած: Մեծ եղավ իմ զարմանքը, երբ քահանան ևս գոտու մեջ պահում էր խենջար<sup>2</sup>:

Խոսելով Չաղբակի «միրի» աղջիկ Մարոյի զարդերի մասին՝ գրում է. նրա զարդերը բաղկացած էին գույնզգույն ուլունքներից, **քթի** և ականջի օղերից, մատանիներից, պարանոցի մանյակից, գլխի **արախչիից**, նախշուն ոսկե և արծաթե դրամներից: Կնոջ ճակատը զարդարված էր ոսկիներով, պարանոցը և կուրծքը՝ մարջանի խոշոր շարքերով<sup>3</sup>:

Այս փոքրիկ հաղորդման մեջ Րաֆֆին հիմնական գծերով նկարագրել է ոչ միայն հայ կնոջ ու աղջկա զարդերը, այլև հստակորեն տարանջատել դրանք՝ ըստ գործառույթների:

**Ժողովրդական հավատալիքներ:** Ժողովրդական հավատալիքները, որպես ազգագրական հետազոտությունների սկզբնաղբյուր, իրենց հաստատուն տեղը գտան 20-րդ դարի կեսերին: Ձևավորվելով մարդկային հասարակության վաղնջական փուլերում և անցնելով հազարամյակներով՝ ժողովրդական հավատալիքները վերապրուկների տեսքով հասել են մինչև մեր ժամանակները: Րաֆֆու «Կայծեր» վեպում դրանք շատ չեն, սակայն իրենց տեղով ու դերով առանձնանում են հայ ժողովրդական հավատալիքների համակարգում: Այս կարգի նյութերը նա գրի է առել իր Շուշան տատից, որը խորհուրդ էր տալիս. «Ֆարհատ, որդի, **բաց գլխով** մութի մեջ ման չգաս, չարքերը կզարկեն գլխիդ... հորանջելու ժամանակ **երեսիդ խաչ հան**, որ սատանան չմտնի փորդ... գիշերը **մաստաք չծամես**, մեռելները կնեղանան», **ավերակների մեջ** չմտնես, **գերեզմանատան** մոտից մենակ չանցնես, ու **սև կատվի հետ** չխաղաս<sup>4</sup> (ընդգծումները՝ Ա. Պ.):

Այս պատահիկը ժողովրդական հավատալիքների հակիրճ, սակայն ուշագրավ գրառում է, որտեղ խտացված կերպով տրված են մի շարք ոլորտների վերաբերյալ «պաշտպանական խրատներ», որոնք մեր օրերում ևս ինչ որ չափով կենսունակ են: Րաֆֆին վկայում է, որ իր տատը գիտեր, թե ինչ է երազը, ինչ խորհուրդ ունի մարմնի այս կամ այն մասերը խաղալը: Նա հասկանում էր **կաշաղակի** լեզուն, թե ինչ կչկչոցով ինչ լուր է բերում, լսել չէր կարող **բուխ** չարագուշակ ձայնը, գիտեր ինչու Սողոմոն իմաստունը անիծեց **ճնճուկին**, կամ ով դրեց հոպոպի գլխի վրա գեղեցիկ

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 316:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 322:

<sup>3</sup> Րաֆֆի, Կայծեր, հ. 4, էջ 416: «Ես շատ զարմացա»,- գրում է Րաֆֆին,- որ օրիորդի քթից նույնպես օղակ էր անրացված, ո՞ր ժամանակից է հայերի մեջ մնացել այդ վայրենի սովորությունը (տես Ա. Պետրոսյան, Եջվ. աշխ. էջ 108):

<sup>4</sup> Րաֆֆի, Կայծեր, հ. 4, էջ 216: Պատմում էին, որ «ղևերը զարկել էին Ստեփանին, որովհետև ցրիորդ միշտ լիքն էր լինում դներով» (նույն տեղում, էջ 255):

փետրավոր սանրը:<sup>1</sup> Ինչպես առաջին, այնպես էլ այս վկայությունը եզակի է ոչ միայն գեղարվեստական գրականության, այլև մասնագիտական գրառումներում:

Ուշագրավ էին տատի պատմած հեքիաթները,— գրում է Րաֆֆին,— սկսած հեքիաթը տևում էր մի ամբողջ շաբաթ, պատմում էր դևերի, սատանաների, դժոխքի և մեռելների մասին:<sup>2</sup> Ինձ լռեցնելու համար տատս ասում էր. «Սու՛ւ, սու՛ւ, մարդագելը եկավ, քեզ կտամ կտանի», իսկ մայրս՝ «Ձե՛նդ կտրի, թե չէ ֆերրաշին կկանչեմ»:<sup>3</sup> Երկուսն էլ ինձ վրա գործում էին միևնույն ազդեցությունը:

Րաֆֆին անդրադարձել է տան օձերի շուրջ եղած ժողովրդական ավանդությունների: Պատմում էին, թե օձերը թագավոր և թագուհի ունեն, երկուսի գլուխներն էլ զարդարված են ոսկե պսակով, ամենաթանկ զոհարներով: Ասում էին, թե քեռիս տեսել է նրանց, սակայն չի ցանկացել խլել պսակները, որովհետև «...այդ օձերի հետ մի դյուխական կապով կապված էր նրա տան բախտավորությունը»<sup>4</sup>:

Սկատենք, որ այս հավատքը հայերի մեջ կրել է ընդհանրական բնույթ՝ հասնելով մինչև մեր օրերը:

Րաֆֆին գրում է, որ տեր Թողիկը հռչակված էր իր իմաստասիրությամբ. ով մի **երազ** էր տեսնում, վազում էր նրա մոտ բացատրություն խնդրելու: Ում երեխան հիվանդ էր, նրան Նարեկ կամ ավետարան էր կարդալ տալիս, որ առողջանա, ով մի գործ էր ցանկանում ձեռնարկել, նրա **տերողորմիայի** վրա էր փորձում իր բախտը: Ասում էին, որ նա ծտերի բերանը աղոթքով կապում էր, որ արտերի ցորենը չուտեն: Դևերին ու սատանաներին բռնում, լցնում էր ապակե սրվակի մեջ, որ մարդկանց չվնասեն<sup>5</sup>:

Կարծում եմ՝ այս պատառիկը երազահանության, **բուժման**, աղոթքների ու ցանկությունների իրագործման արտահայտման խտացված օրինակ է, ժողովրդական հավատալիքը գեղարվեստի միջոցով ներկայացնելու հաջողված պատկեր:

Ուշագրավ է որոշ արգելքների հաղթահարման միջոցների մասին Րաֆֆու հաղորդումները. չբեր կնոջ համար տեր հայրը մի բան էր գրում, որ երեխա ունենար: Եթե տղամարդը ուրիշի կնոջն էր սիրում, տեր հայրն իր **Վեցհազարակի** շնորհիվ նրա սերը սառեցնում էր այդ կնոջից: Երբ մեկը ցանկանում էր մարդու գնալ, տեր հայրն իր թալիսմանների զորությամբ նրա բախտը բաց էր անում: Նրա բոլոր կռահումները կատարվում էին<sup>6</sup>:

Չբերության, արգելված սերը սառեցնելու, ամուսնության հաջողությունը գուշակելու հարցերը եղել են կենսունակ, փոխանցվել սերնդե-սերունդ և որպես վերապրուկ հասել մեր օրերը<sup>7</sup>:

<sup>1</sup> Րաֆֆի, Կայծեր, հ.4, էջ 217:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 224:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 226:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 244:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 245:

<sup>7</sup> Մանրամասները տես Ա.Պետրոսյան, Գալիի պաշտամունքը հայ ժողովրդական հավատալիքներում, ԲԵՂ, 1989, թիվ 2: Նույնի՝ Արջի պաշտամունքը հայ ժողովրդական հավատալիքներում, ԲԵՂ, 1995, թիվ 3:

Րաֆֆին չի շրջանցել նաև յոթ թվի շուրջ եղած հավատալիքները, գրելով. «Միր-Սարտոն սնահավատություն ուներ յոթ թվի նկատմամբ, որի պատճառով բոլոր հարստությունները բաժանել էր յոթ մասի: Ուներ յոթ ջրաղաց, յոթ ձիթհան, յոթ այգի, յոթ անտառ: Նրա տանից դուրս էր գալիս յոթ գութան, նրա արոտավայրերում արածուն էին ոչխարների յոթ հոտեր, նույն խորհրդավոր թիվն ուներ նաև ձիերի երամակները, կովերի, գոմեշների նախիրները: Այդ բոլորը պիտի մնար ժառանգություն նրա յոթ որդիներին»<sup>1</sup>: Հայտնի է, որ յոթ թիվը եղել և այսօր էլ համարվում է երջանիկ թիվ, որի ակունքները գալիս են ժայռապատկերներից: Հետագայում այն ընդունվեց քրիստոնեության կողմից և մտավ քրիստոնեական գաղափարախոսության մեջ:

Ուշագրավ են սրբավայրերի շուրջ եղած ծառերից լաթի կտորներ կապելու վերաբերյալ Րաֆֆու գրառումները: Ծառերից մի քանիսի ճյուղերի վրա փաթաթում էին գույնզգույն թելեր և շորերի կտորներ: Տատը մեկնել էր այդ ծառերի նշանակությունը. «Երբ սուրբ ծառի ճյուղերին մարդ կապում է իր հագուստից մի կտոր, իր բոլոր ցավերն անցնում են այդ ծառի վրա»<sup>2</sup>: Այսօր էլ մեր հեռավոր վանքերի, տարբեր սրբավայրերի շուրջ այդ սովորությունը բավական տարածված է: Դրա մասին են վկայում տարբեր գույնի կտորներով զարդարված տեսարանները, որոնք թողնում են տհաճ տպավորություն: Դրանով ակնկալվում է անձի նպատակների իրականացում, ամեն տեսակի հիվանդություններից խուսափում<sup>3</sup>:

Հայաստանի նման չոր ու ցամաքային կլիմա ունեցող երկրում երաշտն անպակաս է, որի դեմ մշակվել և սերնդից-սերունդ փոխանցվել են տարբեր ծեսեր ու արարողություններ, որոնցով փորձել են մեղմել բնության տարրերը. դրանք **անձրևաբեր ծեսեր** էին: Անդրադառնալով այդ խնդրին՝ Րաֆֆին գրել է. երբ երաշտ էր լինում, ժողովուրդը դիմում էր վանահորը, որ **անդաստան անե**: Վանահայրը վերցնում էր Բարդուղիմեոս առաքյալի սուրբ աջը և թափորը խաչերով, խաչվառներով ու եկեղեցական սպասով գնում էր դաշտերը, դանդաղ շրջում, ողբալի շարականներով աղերսում երկնքի օգնությունը, միջնորդ ունենալով սուրբի աջը<sup>4</sup>:

Որպես կանոն, հավատացիալները ուխտատեղիներ էին գնում ոտքով, որպեսզի ուխտը իրականանար: Նման մի գրառում է թողել Րաֆֆին. պառավը «ուխտ էր դրել յոթն անգամ հետիոտն սուրբ Աստվածածին գնալ, վեցը կատարել է, մնում է մեկը»: Եթե մինչև իսկ գրաստ գտնվեր, ինքը դարձյալ պետք է ոտքով գնար, թեև խիստ դժվար էր տարեց կնոջ համար երեք օրվա ճանապարհն անցնել ոտքով<sup>5</sup>:

Հայտնի է, որ բոլոր ժողովուրդների կենցաղում **աղը** եղել և մնում է սրբություն: Աղի պաշտամունքի մասին Րաֆֆին թողել է հետևյալ կարճ գրառումը. օրինած աղը

<sup>1</sup> Րաֆֆի, Կայծեր, հ.4, էջ 284:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 338:

<sup>3</sup> Մանրամասները տես Ա.Պետրոսյան, Հայ գրականությունը և բանավեպը ազգագրության սկզբնաղբյուր, էջ 86: Դրա ավելի վատթար դրսևորում պիտի համարել նույն նպատակով եկեղեցիների պատերին քարեր կպցնելու սովորույթը, որի բացասական կողմերին անդրադարձել ենք մեր աշխատանքում (տես Ա.Պետրոսյան, նշվ. աշխ.):

<sup>4</sup> Րաֆֆի, Կայծեր, հ.4, էջ 383:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 416:

նրա համար է, որ ուտեցնեն մատաղին, նախքան նրան զոհելը: Օրհնելով աղը՝ վարդապետն ասում է. «Ընդունելի լինի, սուրբ Աստվածածնի օրհնությունը քեզանից անպակաս լինի»<sup>1</sup>:

Ուշագրավ են Րաֆֆու գրառված ժողովրդական այն հավատալիքները, որոնք վերաբերում են բոշա կնոջ մարմինը կսմթելուն, թալիսմանական ծածկագրերին և նապաստակի չարագուշակ լինելուն: Երեխաները գաղտագողի մոտենում և կսմթում էին բոշա կնոջ մարմինը,– գրում է Րաֆֆին,– հավատացած էին, որ նրա մարմինը կախարդական զորություն ունի, եթե կսմթեն, նույն զորությունը կհաղորդվի կսմթողի ձեռքերին, և ձեռքը անխոցելի կլինի ամեն տեսակ զենքից, նա միշտ հաջողակ կլինի կռվի ժամանակ<sup>2</sup>:

Գնելով թալիսմանական ծածկագրերը՝ կանայք որպես պահպանիչ, դրանք դնում էին փոքրիկ սրվակների մեջ, կախում իրենց պարանոցներից, տղամարդիկ իրենց գավազանի մեջ էին դնում՝ հաջող ճանապարհորդություն ունենալու ակնկալիքով<sup>3</sup>: Գանապարհը խաչաձև կտրելով,– գրում է Րաֆֆին,– անցավ չարագուշակ նապաստակը: Նա պպզեց մի քարի վրա և հեռվից նայում էր մեզ: Գոնե մի աղվես անցներ, դա կուրախացներ ինձ, կնշանակեր, որ մեր ճանապարհորդությունը բարեհաջող վախճան կունենար, բայց նապաստակը չար է գուշակում<sup>4</sup>:

Կենցաղի տարբեր ոլորտներին աղերսվող Րաֆֆու վերոհիշյալ պատկերները արժեքավոր են ու արժանահավատ:

**Անուշավան Պետրոսյան, Ազգագրական նյութերը Րաֆֆու «Կայծեր» վեպում** – Գեղարվեստական գրականությունը համարվում է ազգագրական գիտության կարևոր սկզբնաղբյուրներից, որն իր հաստատուն տեղը գտավ մեզանում միայն վերջին տասնամյակում:

Առաջին անգամ փորձ է արվում վեպում սփռված ազգագրական տեղեկություններն օգտագործել որպես արևմտահայերի և պարսկահայերի ազգագրության սկզբնաղբյուր: Ելնելով հողվածի սահմանափակ հնարավորությունից, անդրադարձել ենք միայն տնտեսական, ընտանեկան կենցաղին և ժողովրդական հավատալիքներին: Րաֆֆու գրառումների և այլ աղբյուրների համեմատական վերլուծմամբ փորձ է արվում ներկայացնել քննարկվող ոլորտների ազգագրական նկարագիրը 19-րդ դարի կտրվածքով: Դա մի շրջան էր, երբ վերապրուկային տեսքով դեռևս պահպանվել էր դարերից եկող ավանդական կենցաղի ու մշակույթի շատ արժեքներ:

**Анушаван Петросян, Этнографические материалы в романе Раффи “Искры”** – -

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 429:

<sup>2</sup> Նույն տեղում, հ. 5, էջ 155:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 158:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 277:

**Anushavan Petrosyan, Ethnographic materials in Raffi's novel "The Sparks"** – Belles-lettres is considered to be an important ethnographic source, which, however, became important in our scientific reality only during the last decade.

In the present article we try for the first time to use the ethnographic data of the novel as a source for ethnography of the Armenians of Western and Persian Armenia. Because of the lack of space we have touched upon only the topics on economic and family life as well as folk beliefs. On the basis of comparison of notes of Raffi and other corresponding sources we reconstruct the ethnographic image of the mentioned spheres in the context of the 19th century realities. This was a period, when survivals of centuries old values of traditional way of life were still alive.

*Անուշավան Պետրոսյան – պատմական գիտությունների թեկնածու,  
ԵՊՀ Յնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ*

